

իսկ եթէ վառած ժամանակ ընկնի, նոյն օրն հաց եփելու չէ անոր մէջ. եւ եթէ ընկնելու պահուն հացը մէջն է, զայն շներու տալու է: Եթէ սակայն ուրիշ կենդանի ընկնի եւ սատակի, սուրբ թէ անսուրբ, թոնիրն ի հիմանց պէտք է քակել ու նոր շինել: Ընդ հակառակն թոնդրուքի մէջ կամ ակութի քով գտուած դիակը չի պղծեր զանոնք եւ անոնց վրայ դրուած անօթները (Գ). զի կերակուրն աղոնց հետ անմիջական հաղորդակցութիւն չունի: Թոնրի այս խտրականութիւնը լիկ Ալաւկայ որդւոյն քով չի մնար. այլ իւրմէ երեք զար վերջ դեռ խնդրոյ նիւթ էր Հայոց մէջ ըստ Ապարանեցւոյն (ԽԵ, ԼԸ):

Կահուց պղծութեան գաղափարիս աղբիւրը դարձեալ հին օրէնքն էր, թէեւ քան զհայր շատ համառօտ: Ըստ Մովսիսի՝ անսուրբ անասնոց դիակին դպած փայտեղէն, մաշկեղէն կամ քրձեղէն անօթները մինչեւ երեկոյ ջրի մէջ պիտի մնային, եւ անով կը սրբուէին. իսկ խեցեղէնք խորտակուելու էին, եւ թոնիրք ու կասկարայք քակուելու (ՂԵտ. ԺԱ, 32-5): Այսքան միայն, եւ աւելի բան չկայ:

4. — Ուրիշ պղծումներ: — Հետաքրքրական է հետեւեալն ալ: Եթէ մէկը դիպուածով ընկնի ծառէ մը եւ մեռնի, եւ